302 Կանգնած է մեր առջև մի սուրբ զույգ,

1. Կանգնած է մեր առջև մի սուրբ զույգ,
Հանձնել են իրենց կյանքն Աստծուն:
Լսվում է բաբախումն իրենց սրտի,
Որ լցվել է սիրով Հիսուսի:
Իսկ մենք ցնծալով երգում ենք՝
Ասելով՝ շնորհավոր,
Ասելով՝ շնորհավոր,
Շնորհավոր (շնորհավոր), շնորհավոր
Ձեր պսակը փառավոր:

2. Օրհնի՛ր Դու նրանց կյանքը, Տե՛ր Հիսուս,
Պարգևի՛ր երջանիկ, ուրախ օրեր,
Որ ապրեն Քեզանով միայն, ո՛վ Տեր,
Փառք տալով, գովելով անունդ, Տե՛ր:
Իսկ մենք հավատքով երգում ենք՝
Տե՛ր, օրհնի՛ր նրանց տունը,
Տե՛ր, օրհնի՛ր նրանց կյանքը,
Տե՛ր, օրհնի՛ր (Տե՛ր, օրհնի՛ր), Տե՛ր, օրհնի՛ր,
Նրանց կյանքը, Տե՛ր, օրհնի՛ր: